Արձանագրություն N 2

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-19/ՍՃԸ-2 ծածկագրով գնանշման հարցման գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11 նոյեմբերի 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Դանիելյանը, անդամներ՝ Աղավնի Հակոբյանը, Լիդա Դիլբարյանը, ԱՁ Հայարփի Քալանթարյանը և քարտուղար Գոհար Թադևոսյանը:

Օրակարգ
Հայտերի բացման մասին

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-19/ՍՃԸ-2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լուսինե Դանիելյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

-հայտ ներկայացրել են ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Ծառայության անվանումը	«Մայլանչ» ՍՊԸ ք. Երևան,Վ. Սարգսյան 26/3, էլ.փոստ info@MayLanch.am	Հայարփի Քալանթարյան ԱՁ ք. Երևան Տիգրան Մեծի 3-րդ նրբ., տուն 22, էլ.փոստ euro-wedding@mail.ru	Նախահաշվային գինը
		Գնային առաջարկը /ՀՀ դրամ,առանց ԱԱՀ/		
1	սուրճի ընդմիջում	72.600	66.000	78.000
2	ճաշի ընդմիջում	231.000	196.000	238.000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերը պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան.
- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան.
- առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում (գնահատման թերթիկները կցվում են) հանձնաժողովը որոշեց՝

- **ԱՁ Հայարփի Քալանթարյանին՝**

- 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

- **«Մայլանչ» ՍՊԸ-ին՝**

- 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել և հաջորդ նիստը հրավիրել 2019թ. նոյեմբերի 14-ին ժամը 13:00-ին ք.Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N 501 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ՝ _____ Լուսինե Դանիելյան

անդամներ՝ _____ Աղավնի Հակոբյան

_____ Լիդա Դիլբարյան

քարտուղար՝ _____ Գոհար Թադևոսյան